Հաստատում եմ՝ Ն.Գալստյան

05.06.2023

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾՈՎԱԶԱՐԴ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ», «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սիամարա Գալոյան

2022-2023

2022-2023 թթ. ուսումնական տարվա ընթացքում դասավանդել եմ 6-12-րդ դասարաններում՝ Հայոց պատմություն և Համաշխարհային պատմություն առարկաները:
Ուսումնական տարվա սկզբում նախատեսված ուսումնադաստիարակչական նյութերը պլանավորելիս, դասերը կազմակերպելիս, հաշվի են առնվել պետական և առարկայական չափորոշիչներն ու ծրագրերը: Յուրաքանչյուր դասարանի համար կազմվել են թեմատիկ, գործնական և կիսամյակային ամփոփիչ աշխատանքների ծրագրեր: Առարկաների ուսումնառության ընթացքում կարևորել եմ հայ ժողովրդի պատմական իրադարձությունների ուսումնասիրությունը և փաստերի յուրացումը, հայրենասիրությունը: Աշակերտների հոգում սերմանել եմ հանուն հայրենիքի ապրելու և արարելու գաղափարը, հոգևոր և նյութական մշակույթի պահպանման և ստեղծման անհրաժեշտությունը: Կարևորել եմ աշակերտների մոտ քննադատական և վերլուծական մտածողության զարգացումը, պատճառահետևանքային կապի վերհանումը:
Բոլոր դասարաններում կազմակերպվել են տեսադասեր տարբեր թեմաներով: Թեմաների ամրապնդման նպատակով կազմակերպվել են օրինակելի դասեր(9-րդ, 10-րդ դասարան, 11-րդ դասարան, 12-րդ դասարան Հայոց պատմություն):
«Հայոց պատմություն», «Համաշխարհային պատմություն» առարկաների ուսումնական աշխատանքների կազմակերպման համար ունենք պլանավորման հետևյալ փաստաթղթերը.

1. Ժամանակացույց
2. Ուսումնական նյութերի տարեկան պլանավորում
3. Թեմատիկ պլանավորում ըստ կիսամյակների

Տարեկան թեմատիկ պլանավորման մեջ նշված են ուսումնական նյութի բաշխումը և հատկացված ժամերը: Ըստ կիսամյակների կազմվող թեմատիկ պլանավորման մեջ նախատեսվել են թեմատիկ գրավոր և գործնական աշխատանքներ:

Սովորողների գնահատման ժամանակ հաշվի են առնվել աշակերտների մտավոր և ֆիզիկական զարգացման առանձնահատկությունները, անհատական կարողությունները: Գնահատումն իրականացվել է բանավոր, գործնական, թեմատիկ և կիսամյակային գրավորների գնահատականներով(բացառությամբ II կիսամյակի): Կիրառելով

դասավանդման արդյունավետ մեթոդներ կատարվել է հանրակրթական առարկայական չափորոշիչներով ամրագրված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն պահանջների յուրացում սովորողների կողմից՝ կիրառելով դասավանդման արդյունավետ մեթոդներ և ժամանակակից տեխնոլոգիաներ:

Ուսումնական տարվա ընթացքում համագործակցել եմ սովորողների ծնողների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման, ուսման որակի բարձրացման հարցերով:

Համագործակցել եմ նաև մեթոդմիավորման անձնակազմի հետ, պահպանել ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված պահանջները: Ուսումնական տարվա ընթացքում քննական դասարանների աշակերտները կնախապատրաստվեն գիտելիքների ստուգումներին և ավարտական քննություններին՝ նրանց կիրազեկվի քննությունների աշխատակարգը և ժամանակացույցը: Քննությունների ավարտին կամփոփվի դրանց արդյունքները՝ ի մի կբերվեն արձանագրված հաջողություններն ու ձեռքբերումները, ինչպես նաև թերությունները:

<<ԿԶՆԱԿ>> հիմնադրամը <<Վիզուալ Հայաստան>> զարգացման հիմնադրամի հետ համատեղ իրականացրեց <<Պատմաբանի օր. Նախագծային ուսումնառություն>> ծրագիրը, որին իր մասնակցությունն ունեցավ Ծովազարդ գյուղի միջն. դպրոցը:

Նախաձեռնության նպատակն էր նախագծային ուսումնառության միջոցով նպաստել սովորողների աշխարհայացքի ընդլայնմանը, նպաստել 17-19-րդ դարերի հայկական մշակույթի կենտրոնների, մշակույթի բնագավառների ու ճյուղերի կրթական հաստատությունների, նշանավոր գործիչների և ստեղծագործությունների և արվեստի գործերի վերաբերյալ գիտելիքների ձեռքբերմանը, հայկական դպրոցների դերը նոր սերնդի կրության և հայապահպանման գործում գնահատելու, արժևորելու, բնութագրելու, բացատրելու կարողությունների զարգացմանը:

Պատրաստել ենք պատի թերթ **<<**Շնորհավոր տոնդ Պատմաբան**>>** խորագրով:

Անցկացրել եմ բաց դաս միջոցառում <<Հայոց մեծ եղեռն >> և <<Հայերի ինքնապաշտպանական մարտերը>> խորագրով:Միջոցառումը բովանդակալից և հետաքրքիր էր:Այն ուղեկցվեց Ֆլորա Մարտիրոսյանի երգերի մեղեդիներով՝ տեսանյութի պատրաստում/սահիկաշար/: